

Վարք Մաշտոցի

Ոսկեդարեան գրականութեան շարքում Մաշտոցի *Վարքը* միակն է, որ վստահօրէն պատկանում է Կորինի գրչին. նրան վերագրուածների մէջ է Եւթաղի նախադրութիւնների թարգմանութիւնը: *Վարքը* գրուել է 443-449 թթ., հաւանաբար անելի մօտ առաջին ժամկետին: *Վարքի* կրճատուած ու փոփոխուած տարբերակները մտել են ճառընտիրների ու Յայսմաւորքների մէջ: Որոշ առանձնայատկութիւններ աշխատութիւնը առնչում են ներքողի ժանրին, սակայն գերակշռում են բուն վարքային ձեւերը:

Վարքագրութեան կանոնների համաձայն՝ Կորինը հաղորդում է իր հերոսի ծննդավայրի, ընտանիքի, դաստիարակութեան, գործունեութեան, վախճանի մասին: Առանցքային դեր են կատարում մասնաւորապէս այն փաստերը, որոնք վերաբերում են երեք այբուբենների ստեղծմանը եւ Մաշտոցի քարոզչական գործունեութեանը: Ձեռագիր անանդոյթի յաջողուած ուղղման շնորհիւ (Արտաշէս Մաթեոսեան) պարզուում է, որ Մաշտոցը անմիջապէս կռահել է Դանիէլեան գրերի անբաւարարութիւնը եւ անցել բուն հայկական գրութեան ստեղծմանը:

Վարքի լեզուն իրօթին է՝ ծանրաբեռնուած հռետորական դարձուածքներով, կան յատկորոշման կուտակումներ, այնուհանդերձ փաստական շերտը առանց մեծ դժուարութեան ենթարկուում է բացորոշ մեկնաբանութեան:

Վարքի առանձին հատուածներ մտել են Ագաթանգեղոսի եւ Փաւստոս Բուզանդի երկերի մէջ, վերիմաստաւորուել եւ ձուլուել նրանց հետ:

Երկի վերջին հատուածը կազմում է ժամանակագրական մի աղիւսակ, որը կարելի է վստահելի տեղեկութիւններ է պարունակում Մաշտոցի գործունեութեան վերաբերեալ: Ոճական առումով այն թերեւս դուրս է մնում *Վարքի* շարադրանքից, բայց անվերապահօրէն հիմնուած է նրա բովանդակութեան վրայ:

Կորինի երկի էլ-տարբերակը վերահրատարակուում է՝ ըստ Մանուկ Աբեղեանի կազմած բնագրի (Կորին, Վարք Մաշտոցի բնագիրը ձեռագրական այլ ընթերցուածքներով, թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով ի ձեռն պրոֆ. Մանուկ Աբեղեանի, Յայպետիրատ, Երեւան, 1941). հաշուի է առնուած Արտաշէս Մաթեոսեանի ձեռագրագիտական շտկումներն ու դիտողութիւնները:

Կարէն Իւզբաշեան, Պարոյր Մուրադեան

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Կորիւն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատութեամբ Ա. Մաթեւոսեանի, Երեւան, 1994 (Կորիւնի երկի ձեռագրերի ու տպագրերի ցանկը տե՛ս էջ 9-19):
2. R. W. Thomson. A bibliography of Classical Armenian Literature to 1500 AD. Brepolis-Turnhout, 1995, pp. 142-145.
3. Կորիւն, Վարք Մաշտոցի. Յառաջաբան, բնագրի վերակազմութիւն եւ ծանօթագրութիւններ, աշխատասիրեց Յ. Պօղոս Անանեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1998 (Հայկական մատենադարան, 4), (մատենագիտութիւնը տե՛ս էջ Ը-ԺԴ)

ԲԱՂԴԱՏՈՒՄԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՏԱՌԱՆԻՇԵՐ

Բնագիր Ա

b - ՄՄ ձեռ. թիւ 2639, ժամանակ՝ 1675-ից յետոյ

c - ՄՄ ձեռ. թիւ 1891, ժամանակ՝ 1774

d - ՄՄ ձեռ. թիւ 131, ժամանակ՝ 1781

e - ՄՄ ձեռ. թիւ 3143, ժամանակ՝ 1828

Ճա - ՄՄ ձեռ. թիւ 3787, Տօնական, ժամանակ՝ 1347-1350

Ճբ - ՄՄ ձեռ. թիւ 3797, Տօնական, ժամանակ՝ շուրջ 1347

a - Կորիւն, Պատմութիւն Վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ, Վենետիկ, 1894. Բ տպագրութիւն

վ - Կորիւն, Պատմութիւն Վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ, Վենետիկ, 1894 հրատարակութեան մէջ բերուած ընթերցուածքները Ս. Ղազարի ձեռագրատան «միւս օրինակից»: Այդ երկու օրինակներն էլ «անթուական եւ նոտրագիր» են:

Ս - Սուտ-Կորիւն: Ըստ հետեւեալ հրատարակութիւնների՝ Կորիւն, Պատմութիւն Վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ, Վենետիկ, 1894 եւ՝ Կորիւն, Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ, Թիֆլիս, 1913:

Բնագիր Բ

ՄՄ ձեռ. թիւք 3787 եւ 3797. Տօնականներ, որոնք օգտագործուել են նաեւ Ս. Աբեղեանի կողմից Կորիւնի համեմատական բնագիրը կազմելիս:

Բնագիր Գ

Փարիզի Ազգային Մատենադարան, հայերէն ձեռ. թիւ 178. Տօնական ժողովածու. ժամանակ՝ ԺԲ դար:

[Ա]

ՉԱՉՔԱՆԱՉԵԱՆ Ազգին եւ գՅայաստան աշխարհին զաստուածապարզել գրոյն, եթէ ե՛րբ եւ յորում ժամանակի մատակարարեցաւ եւ որպիսի՛ արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղէն շնորհս երեւեցաւ եւ վասն նորին լուսաւոր վարդապետութեան եւ հրեշտակաբար կրանիցն առաքինութեան զմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել եւ մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի մտացս վասն յուշ արկանելոյ միայնագործ հոգայի, եկեալ հասաներ առ իս հրաման առն միոյ պատուականի Յովսէփ կոչեցելոյ, աշակերտի առն այնորիկ, եւ ընդ նմին այլոց եւս քաջալերութիւն աշակերտակցաց մերոյն վարդապետութեան: Ուստի եւ իմ մասնաւոր աշակերտութեան վիճակ առեալ, թեպէտ եւ էի կրսերագոյն, եւ առաւել քան զկար մեր, գրաւեալ անաչառ հրամանին հասելոյ, փութանակի եւ առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել: Չորս եւ մեր համաւրէն աղաչեալ երկախառնել ընդ մեզ աղաւթիւնք՝ յանձնարարութեամբ աստուածեղէն շնորհացն, զի կամակարագոյնս եւ ուղղագոյնս նաւիցեմք զհամատարած ալեաւթն վարդապետական ծովուն:

[Բ]

Եւ արդ առեալ նախաբանեսցուք, եթէ իցե՞՞ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց, ոչ ի մենջ արուեստախաւսեալ մերոյն կարծեալք վիճաբանելով, այլ յաւրինակացն տուելոց զընդդիմակացն բարձրացուցանել: Քանզի Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զհարոց սիրելեաց, ոչ միայն ըստ առաքինութեան վարուց՝ զքննաղ եւ զբարձրագոյն հատուցումն բաւական համարել յանսպառ յաւիտեանսն, այլ եւ աստէն իսկ կանխագոյն. զի անցաւոր ժամանակաւքս մատենապատում երկնաբերձ պայծառացուցեալ, զհոգեղինացն եւ զմարմնականացն առ հասարակ փայլիցեն:

Եւ ի մովսիսական պատմութեան յայտնի է երանելեաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաստատութիւն, աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն, սքանչելական կենացն պայծառութիւն: Չի ոմն ընդունելի պատարագաւ արդար կոչեցեալ, եւ այլ ոմն հաճոյական արուեստիւ ի վերայ ամենակուլ մահուանն կենալք երեւեալ, եւ միւս ոմն բովանդակ արդարութեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ աստուածապատիժ ծովուն հանդերձ ամենայն շնչականաւք տարեւոր ժամանակաւք նաւակաց պահեալ, եւ միւսոյն յանկարծագիւտ հաւատովք արդարացեալ, աստուածամերձ աստուածախաւս դաշնաւոր կատարեալ, եւ զաւետիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ: Բազմաւք ե՛ւ այլ նոյնպիսիք աստուածածանաւթ գտեալք, որոց ազնուականութիւնքն յամենայն աստուածածանաւթ գրոց պատմի:

Հանգոյն ասացելոցս երանելոյն Պաւղոսի առ Եբրայեցիսն կարգեալ զանուանս՝ զովէ զնոցին ճշմարտութիւն հաւատոցն. որով զվարձահատոյց միսիթարութիւն ընկալան յամենապարզելողէն Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յառաջադիմութեանցն. նա եւ զժանդագործին Րահաբու զհիւրընկալութիւն լրտեսացն՝ համեմատէ: Իսկ իբրեւ հայեցեալ ի բազմախուռն գումարութիւն արդարոցն՝ զսակաւուցն զանուանս յայտ առնէ, եւ զայլովք եւս զանց առնէ, անբաւական զժամանակն առ ի կարգի պատմելոյ: Ի կիր արկանէ այնուհետեւ նշանակել միանգամայն զփորձութիւնս ի վերայ յարձակեալս եւ զնոցա զանընդդիմակաց զնահատակութիւնսն, զորս եւ պատուականս քան զաշխարհական վաճառս համարի:

Սոյն աւրինակ եւ ամենայն գիրք հոգեպատումք նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն զաւրաց. զոմանց՝ ըստ աստուածեղէն կրանիցն զբարեյաղթութիւն, եւ զոմանց՝ ըստ

աշխարհակիր կարգաց գմարտից եւ զպատերազմաց արուօրինսն, որպէս զՆեբրոտայն եւ զՍամփոսնին եւ զԴավթայն: Եւ զոմանց զբնական զիմաստութիւն գովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ, որպէս զՅովսէփայն յեգիպտոս, եւ զԴանիէլին ի Բաբելոն: Յորոց եւ հզաւր թագաւորացն խրատիչք էին, զաշխարհական կենցաղոյս զհանգամանսն ցուցանէին, հանդերձ ամենիշխանին Աստուծոյ ծանաւթս առնելով: Չորոց եւ մարգարէին իսկ գովեալ զիմաստութիւնն, ասէր ցոմն այսպէս. «Մի՞թէ իմաստնագո՞րն իցես քան զԴանիէլ. կամ իմաստո՞ւնք խրատութեք խրատեցին զքեզ հանճարով իւրեանց: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ հոգեկան ազգին հրեշտակութեամբ՝ գովեալ զսրբոցն զաւրութիւն, որ զԴանիէլ ցանկալի քարոզելովն կոչէին. եւ զսուրբ Տիրամայրն ի Գալիլեայ՝ աւրինեալ ի կանայս:

Բայց զի՞նչ ասիցեմք զգուգականացն զառ ի միմեանց պատուեալ զգովութիւնս, զորոց եւ Տէրն իսկ ամենայնի՝ բերանալիր գոչեր զազնուականութիւնսն, ոչ միայն զյանդիմանական գործոյն, այլ եւ զծածուկ սրտիցն լուսաւորութիւնս առաջի հրեշտակաց եւ մարդկան բերէ: Որպէս զհիւրամեծարին Աբրահամու հրեշտակաւքն հասելովք զծառայական հաւասարութիւնն յայտ արարեալ. պատմելով նմա յետ աւետեացն ընկալելոց, զինչ ի Սողոմն էր գործելոց: Նոյնպէս եւ զքաջի Նահատակին Յոբայ յառաջ քան զպատերազմել առաջի պատերազմականին՝ յաւրինէ զգովութիւն ասելով. «Այր ճշմարիտ, արդար եւ աստուածապաշտ, եւ որոշեալ յամենայն գործոց չարաց: Իսկ մեծին Մովսէսի զառաւելագոյն զաստուածամուկի մերձաւորութիւն՝ ամենայն եկեղեցական գրով հնչեցուցեալ, զորոյ եւ զտղայութեան զկայտառութիւնն յայտ արարեալ աստուածեղէն աւրինացն. նա եւ զայլագոյն զՅոթորի եւս զխրատն չանցուցեալ անգիր:

Եւ այնպէս միահամուռ ամենայն աստուածակրան արուեստականացն բարեգործութիւնք՝ փայլեն յաստուածագիր աւրինացն, զորոց չէ ոք բաւական յիշատակել զերանելի անուանց գումարութիւն: Եւ ոչ միայն զյառաջագունիցն, այլ եւ զկնի եղելոցն զՄիածնի Որդւոյն Աստուծոյ փրկչին ամենեցուն՝ ի լուսաբեր աւետարանին իւրում ծաղկեցուցանել զազնուականութիւնս, մանաւանդ երանութեամբ իսկ պսակեր ոչ միայն սեպհականացն զերկոտասանիցն, եւ կամ զյառաջամուտ զԿարապետին, այլեւ զայլոց մատուցելոցն գովէ զհաւատոցն ճշմարտութիւն: Քանզի զՆաթանայել առանց նենգութեան նշանակէ եւ զթագաւորագին զմեծութիւն հաւատոցն՝ անգիւտ յիսրայելի ասէ: Բայց ոչ միայն զմեծամեծսն, այլ առաւել եւս զթեթեւագոյնսն բարձրագոյնս [առնէ] անարգամեծարն Զրիստոս, որ սակաւիկ ինչ զծախ իւղոյն յարգէ, եւ զծախելեացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝ առ ի ներքոյ երկնից: Եւ զկնոցէն քանանացոյ մեծ զհաւատոցն ասէ. նաեւ զղանկաց երկուց ընծայելոցն գովէ զարկանելեացն զյաւժարութիւն առաւել քան զմեծացն:

Իսկ Պաւղոսի ի մտի եղեալ էր շրջեցուցանել զքրիստոսադիր կարգացն պայծառութիւնն, անաւթ ընտրութեան անուանեալ, անուանակիր յաշխարհի իւրոյ սքանչելի անուանն առնէ: Վասն որոյ երանելոյն հայեցեալ ի շնորհացն բարձրութիւն առ իւրոյ մեծ աւրինացն եւ առ ամենայն սրբոցն, բարձրագոյն բարբառով ի փառատրութիւն դառնայ, եթէ «Շնորհք Աստուծոյ, որ յամենայնի հռչակ հարկանէ զմէնջ ի Զրիստոս եւ զհոտ զիտութեան իւրոյ յայտնի առնէ մեւք յամենայն տեղիս: Ի վերայ այնորիկ ապա եւ զհամարձակագոյնն բերէ, թէ «ո՞ կարէ բիծ դնել ընտրելոց Աստուծոյ, եւ զայս աւճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն՝ զամենայն գործակցաց իւրեանց գրով նշանակել զքաջութիւնս: Տեսանել զոմանց ի սուրբ աւետարանին եւ զոմանց ի Գործս Առաքելոցն երանելոյն Ղուկասու մատենագրեալ. եւ իցեն որ ի Կաթողիկէս առաքելոցն առաւելագոյնս ճանաչին:

Այլ Սրբոյն Պաւղոսի չորեքտասանեքումբբ թղթովք պատմէ զիւր առաքելակիցս եւ նիզակակիցս, եւ ուրախակիցս իւր առնէ, եւ ի վախճանի թղթոցն ըստ իւրաքանչիւր ումեք յողջոյն կատարեալ՝ յանուանէ հարցանէ. եւ զուրումն յաւետարանէ անտի նշանակէ զգովութիւնսն: Բայց ո՛չ միայն զերանելոյն զազնականութիւնսն յարգէ, այլ եւ զքրիստոսամեծար ասպնջականիցն իւրոց՝ բազում գովութիւնս փոխանակ մեծարանացն կարգէ, վասն որոյ եւ յաղաչանս առ Աստուած մատուցեալ՝ զփոխարէն բարեացն հատուցանել հայցէ: Եւ ամենայն եկեղեցեալք հնչեցուցանէ զընտրելոցն զազնականութիւն, ոչ միայն զարանցն, այլեւ զկանանցն աշակերտելոց, որ զճշմարտութիւնն աւետարանեն:

Եւ զայս ամենայն աւետարանեալ ոչ ի պարծանս գովութան, այլ զի աւրինակ եւ կանոն զկնի եկելոցն պաշտիցի. որպէս ի նոյն իսկ զի բարեաց գործոց նախանձաւոր լինել ամենեցուն ստիպէ ասելովն, թէ «Չիտ երթայք սիրոյ. եւ նախանձաւոր լինել ամենեցուն հոգեւորացնէ: Որոց զյաւժարութիւն Աբայեցոց վասն պաշտաման սրբոցն ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալ յորդորեաց: Այլեւ համարձակութիւն իսկ տայ անխափան ի բարեացն առաքինութիւն, թէ՛ «Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիսէ: Այլ եւ նմանաւ իւր եւ Տեառն ստիպէ լինել:

Դարձեալ փութայ ամենեքումբբ հանդերձ ըստ Զրիստոսի հետոցն վարել. «Յայեցարո՛ւք, ասէ, ի զաւրագլուխն հաւատոց, եւ ի կատարիչն Զրիստոսէ: Եւ դարձեալ, թէ՛ «Յիշեցէ՛ք զառաջնորդս ձեր, որք խաւսեցան զբանն Աստուծոյ. հայեցեալ յելս զնացից նոցա, նմանաւորք եղերուք հաւատոցնէ: Եւ միանգամայն, եթէ՛ «Չայս խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձեւջ որ եւ ի Զրիստոս Յիսուսէ: Յանգոյն սմին եւ Ղուկաս յսկիզբն Առաքելագործ մատենին դնէ: Իսկ ցանկալի Տեառնեղբայրն Յակոբոս, զհամաւրէն իսկ զգունդն սրբոց հանդերձ սրբասէր տերամբն յաւրինակ առեալ՝ ի թղթին իւրում ասէ, եթէ «Աւրինակ առէք չարչարանաց եւ յերկայնմտութեան զմարգարէսն, որ խաւսեցան յանուն Տեառն. զհամբերութիւն Յոբայ լուարուք, եւ զկատարումն Տեառն տեսէքէ:

Յայտնի է այսուհետեւ ասացելովքս, եթէ գովութիւն ամենայն աստուածասէր ընտրելոցն ի Տեառնէ է, որ՝ ի հրեշտակաց, որ՝ առ ի միմեանց, ոչ ի պարծանս անձանց, այլ առ ի նախանձուկս միմեանց արկանելոյ, զի միմեամբբ քաջալերեալք՝ հասանիցեմք ի բարեացն կատարումն՝ ի նշանակեալ նպատակն երանելոյն Պաւղոսի, եթէ՛ «Միաբան հասանել ի չափ հասակին Զրիստոսիէ: Որոյ ազատութիւնն յերկինս է, ակն ունել փրկչին մեծին Աստուծոյ:

Ունիմք եւ զկանոնական յաջորդեալ յառաքելոցն անտի զշնորհապատում գրեալսն, եթէ ո՛րպէս մեծարեալք ի միմեանց, զովեալք ըստ ճշմարիտ հաւատոյն եւ ըստ աւետարանագործ կրանից, մինչեւ ցայսաւր ժամանակի նովին սովորութեամբ վարին:

Եւ արդ առեալ յերկոցունց համարձակութիւն ի գիր արկանել եւ զվարս առն արդարոյ:

Արդ այսուհետեւ եւ խոստացեալն առաջի դիցի, եւ հայրենակատար մեծարեալ պայմանաւ որ առ ի մեւջ՝ հաճեսցի, եւ նոցա քաղցրատուր հրաման հատուցեալ զարդարեսցի:

[Գ]

ԱՌՆ, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ եւ փոյթ արարեալ մեր պատմելոյ, եր Մաշթօց անուն, ի Տարաւնական գաւառէն, ի Յացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Յայոց Մեծաց, կացեալ յարթունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Յայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ եւ հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զարականաց: Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, եւ ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնսն:

[Դ]

Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն, եւ առեալ զհաջն պարծանաց՝ ելաներ զկնի ամենակեցոյց խաչելոյն: Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառներ, եւ անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր: Բազում եւ ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ հոգեւորացն զանձն տուեալ՝ միայնաւորութեան, լեռնակեցութեան, քաղցի եւ ծարաւոյ եւ բանջարածաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ եւ գետնատարած անկողնոց: Եւ բազում անգամ զհեշտական հանգիստ զիշերոյն եւ զհարկ քնոյ՝ յոտնաւոր տքնութեան ի թաւթափել ական վճարէր: Եւ զայս ամենայն առներ ոչ սակաւ ժամանակս: Եւ գտեալ եւս զմանս՝ յինքն յարեցուցանէր՝ աշակերտեալ նմին սովորական աւետարանութեան:

Եւ այնպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ եւ պայծառացեալ՝ ծանաւթական եւ հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան:

[Ե]

Առեալ այնուհետեւ երանելոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջաներ յանկարգ եւ յանդարման տեղիս Գողթան: Այլ եւ ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած եւ աստուածասէր, որում անուն եր Շաբիթ, եւ ասպնջական հիւրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի: Իսկ երանելոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, եւ ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութեամբ դիւացն փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց: Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր զհամաշխարհականս սփոփելոյ. եւ առաւել աղաւթս մշտնջենամուռնչս եւ բազկատարած պաղատանս առ Աստուած եւ արտասուս անդադարս, զմտաւ ածելով զառաքելականն, եւ ասէր հոգալով. «Տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց եւ ազգականացն:

Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ եւ թակարդապատեալ եւ անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի՛ արդեալք ելս իրացն գտանիցէ:

[Զ]

Եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դեգերեր, յարուցեալ այնուհետեւ հասաներ առ սուրբ կաթողիկոսն Յայոց Մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ: Եւ միանգամայն յաւժարութեամբ գումարեալ հանդերձ աղաւթիւք մեծաւք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյն: Եւ զայն առնէին աւուրս բազումս:

Ապա ելանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, եւ ի գիւտ նշանագրաց Յայաստան ազգին հասանել:

Բազում հարցափորձի եւ քննութեան զանձինս պարապեցուցեալ եւ բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա եւ զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Յայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ:

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղփաբետաց հայերէն լեզուի: Եւ իբրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ, յաւժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն հրովարտակաւք առ այր մի երեց, որոյ անուն Յաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի:

Իսկ Յաբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, եւ նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, եւ ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Յայոց: Ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր: Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ եւ Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Յաբէլէն, ուրախ լինէին:

Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտ խնդրելին, հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով եւ յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, եւ իբրեւ ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, եւ նովին նշանագրովք տանէր:

Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղորբայս զկապս հայերէն լեզույն, մանաւանդ զի եւ նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, եւ նմին ելս խնդրէին ժամանակս ինչ:

[Է]

Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի եւ միաբանութեամբ սրբոյն Սահակայ, եւ հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր զնայր ի հինգերորդ ամի Վռամշապոյ արքային Յայոց, եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորոց. որոց առաջինն Եդեսիա կոչի, եւ երկրորդին Ամիդ անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն եւ երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերականաւքն եւ իշխանաւքն քաղաքաց պատահեալ, եւ

բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունելին հոգաբարձութեամբ ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի:

Իսկ աշակերտասեր վարդապետին վտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգեր [ի քաղաքին Եդեսացոց], եւ զոմանս ի յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն գումարեր:

[Ը]

Եւ նորա իւրովք հաւասարաւք զսովորականն առաջի եղեալ զաղաւթս եւ զտքնութիւնս եւ զպաղատանս արտասուալից, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, եթէ՝ «Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ աւճան գտանելոյ: Որում պարգեւեր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, յաւրիներ սիղոբայիւք կապաւք:

Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսէն սրբոյ, հանդերձ աւգնականաւք իւրովք իջաներ ի քաղաքն Սամուսատացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցոյն մեծարեալ լիներ:

Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Յռոփանոս անուն գտեալ, որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն եւ զլայնագոյնն, զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն, միանգամայն յաւրիներալ եւ յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտաւք իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեաց գաւառէն, եւ երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյն զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանաւթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն եւ զիւրատ, իմանալ զբանս հանճարոյ: Որ եւ գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան:

[Թ]

Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին եւ հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերեր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց նախընկալն եղել, առաջի արկեալ նոցա զնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բազում իսկ զովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ, եւ ի միսիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք: Յորոց հրաժարեալք այնուհետեւ եւ առեալ թուղթս աւետագիրս, հանդերձ շնորհատուր պարգեւաւքն եւ ամենայն իւրայիւքն, ի շնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լիներ. զաւթեւանաւք անցեալ աջողութեամբ եւ հոգելից ուրախութեամբ եկեալ հասաներ ի Յայաստան աշխարհն, ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանաւք Նոր Քաղաքին, ի վեցերորդ ամի Վռամշապիոյ արքային Յայոց Մեծաց:

Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինեական լերինն. չասեմք թէ առաւելաւքն՝ պակասագոյն: Քանզի յԱստուծոյ առեալ եւ աստուածագիր հրաման ի բազուկս՝ այրն աստուածատես ի լեռնէն իջաներ. այլ վասն վրեժագործ ժողովրդեանն, որոց թիկունք ի տերունիսն եւ կործան յերկիր, տիրադրութք յիւրեանց կուռս ձուլածուին երկիր

պագանէին, եւ զնորին հրամանաբերն սրտառուչ սրտաբեկ լացուցին. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէք բերելոյն թախծութիւնն: Իսկ այսր երանելոյ՝ վասն որոյ ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ արինակի, որ անդն գործեցան, այլ ինքն իւրով լցեալ հոգեւոր մխիթարութեամբ՝ կարծեալ զընդունելեացն յաւժարութիւնն եւ ընդունելեացն յուսով ուրախութեան՝ դասաւորութիւն ճանապարհացն աւետաբեր:

Բայց մի՛ ոք յանդգնագոյն վասն ասացելոցն զմեզ համարեսցի, թէ զհարդ զայր մի խոնարհագոյն ընդ մեծին Մովսէսի, ընդ աստուածախաւսին, սքանչելագործին նմանեցուցեալ հաւասարեաց. որով թերեւս ստգտանիցեմք: Եւ կարեմք այլ աւելի հաւատովք. քանզի եւ չկայ ինչ ի վերայ յայտնեալք եւ ծածկականաւք զաստուածականն խոտել, քանզի միոյն Աստուծոյ ամենազաւրի շնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին:

Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազդ լիներ թագաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ աւագանւոյն ամբոխ, ի քաղաքէն ելեալ՝ պատահէին երանելոյն զափամբ Ռահ գետոյն: Եւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի եւ բարբառաւք ցնծութեան եւ երգաւք հոգեւորաւք եւ բարձրագոյն արհնութեամբք ի քաղաքն դառնային, եւ զաւուրս տաւնական ուրախութեամբ անցուցանէին:

[Ժ]

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանսն Մարաց, որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւղաւորեան, այլ եւ վասն խեցբեկագոյն եւ խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին: Առ ի յարդարել եւ զնոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարզախաւսս, հռետորաբանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանաւթս կացուցանէին: Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանաւք արինապատգամացն, մինչեւ բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն գերծանել:

[ԺԱ]

Եւ ի ձեռն առեալ այնուհետեւ աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ ի թարգմանել, ի գրել եւ յուսուցանել. մանաւանդ հայեցեալ ի տեսնաբարբառ հրամանացն բարձրութիւնն, որ առ երանելին Մովսէս եկեալ, վասն ամենայն իրացն եղելոց, յաստուածեղէն պատգամացն բարձրութիւն աւանդելոցն՝ մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն որ գալոցն էին. նոյնպիսիք եւ այլոց մարգարեիցն հրամայեալք: «Առ, ասէ, քարտեզ նոր մեծ, եւ գրեա՛ ի նմա գրչաւ դպրիտ: Եւ այլուր, թէ՛ «Գրեա՛ զտեսիլդ ի տախտակի, եւ ի գիրս հաստատեա՛: Իսկ Դաւիթ յայտնապէս եւս վասն ամենայն ազգաց՝ զվիճակ աստուածատուր արինացն նշանակէ ասելովն, թէ՛ «Գրեսցի յազգ այլէ: Եւ թէ՛ «Տէր պատմեսցէ գրովք ժողովրդոցե: Չոր եկեալ կատարեաց ամենափրկիչն Զրիստոս շնորհատուր հրամանաւն, եթէ՛ «Ելէք ընդ ամենայն ազգս. եւ եթէ՛ «Զարոգեսցի աւետարանս ընդ ամենայն տիեզերս: Ուստի եւ երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ՝ յուսալից փութով եւ երեւելի եւ արդիւնակատար ըստ աւետարանին՝ զիւրեանց մշակութիւնն ցուցանեն:

Յայնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Յայոց անպայման սքանչելի լիներ. յորում յանկարծ ուրեմս արեւսուսոյց Մովսէս՝ մարգարեական դասուն, եւ յառաջադէմս Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն

Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախաւսք գտան:

Անդ էր այնուհետեւ սրտալիր ուրախութիւն եւ ակնավայել տեսիլ հայելոյն: Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ անտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան, առժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր. ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ եւ յառաջագոյն յաւիտենիցն, եւ ապա եկելոցն, սկզբանն եւ կատարածի, եւ ամենայն աստուածատուր անանդութեանցն:

[ԺԲ]

Իսկ իբրեւ զչափ առեալ զիրացն հաստատութեան, եւ համարձակագոյն եւ առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիւտ վարդապետութեանն խմբէին ուսուցանել եւ թեքել, եւ պատրաստական քարոզութեանն անգետ մարդկան յաւրինել: Որոց եւ ինքեանք իսկ ի կողմանց եւ ի գաւառաց Յայաստան աշխարհին յորդեալք եւ դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ: Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն եւ քահանայապետացն, բղիսեցին Յայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ: Անդ էր յիշելի եւ մարգարեականն, եթէ՝ «Եղիցի անդ աղբիւր բղիսեալ ի տան Դաւթի:

Որ եւ սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ զգործ անտարանչացն Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս. ի գաւառս, ի տեղիս տեղիս Յայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս եւ առ ի զայլսն զեկուցանելոյ: Որոց կանոն եւ արինակ զիրեանց անձանց արգասիս եղեալ, եւ պատուիրեալ կալ ի նմին կանոնի:

Եւ իւրեանց անդէն զ'առնչութեակաց արթունիսն, հանդերձ ամենայն ազատագունդ բանակիւն, աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ: Առաւել երանելոյն Սահակայ զՄամիկոնեան որեարն ի վարժս վարդապետութեանն պարապեցուցեալ, որոց առաջնոյն Վարդան անուն էր, որ եւ Վարդկան կոչէր: Նոյնպէս եւ զամենայն ոգի ջանայր յերիւրել, հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեան:

[ԺԳ]

Յետ այնորիկ ամնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց, որպէս զի տեր Եպիսկոպոսն ի կայենականսն, եւ նա ի սփիւռս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն: Եւ հրաժարեալ ի նոցանէն հանդերձ աւզնականաւքն, որոց առաջնումն Տիրայր անուն ի Խորձենական գաւառէն, եւ երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարաւնոյ, որք էին սուրբք եւ զուարթագոյնք, հանդերձ այլովք եւս սպասաւորաւք անտարանին, զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել: Որովք յանձն եղեալ երանելին շնորհացն Աստուծոյ, երթեալ իջանէր յԴոտաստակն Գողթան, յառաջին դաստակերտն իւր: Եւ անդ ընդելական սովորութեամբն ի կիր արկեալ զվարդապետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ, լի ամներ զգաւառն ողջունիւ անտարանին Քրիստոսի. եւ կարգեր յամենայն զհիւս գաւառին դասս սրբոց վանականաց: Որում եւ հասեալ ժամանեալ հայրաբարունի Գտայ, որդւոյ Շաբաթայ ամն քրիստոսասիրի, բազում սպասաւորութիւն իբրեւ հաւասարի որդւոյ վարդապետին տաներ:

[ԺԴ]

Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելանէր: Եւ անդ աստուածասեր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղէնակ անուն: Բազում աւգնականութիւն գտեալ ի նմանէ վասն իրացն առաջի արկելոցն, մինչեւ հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց: Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգագանամիտ զվայրենագոյն զճիւղաբարոյ կողմանցն. եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել, մինչեւ ի ևոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս, այր սուրբ եւ երեւելի, հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ: Ապա եւ զերկիրն Սիւնեաց դասուք վանականաց լնոր:

Յորում ժամանակի պարգեւեալ յԱստուծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ, այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, եւ ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր:

[ԺԵ]

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ հոգ ի մտի արկանէր սիրելին Քրիստոսի եւ վասն բարբարոսական կողմանն: Եւ առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյն նմա ի Տեառնէ: Գրէր, կարգէր եւ արինաւք յարդարէր. եւ առնոյր ընդ իւր զմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ զնայր իջանել ի կողմանս Վրաց: Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին, որում անուն էր Բակուր, եւ եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս: Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ արինացն Աստուծոյ՝ թագաւորին եւ զաւրացն, հանդերձ ամենայն գաւառաւքն:

Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում եւ յանձն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել: Եւ գտեալ զայր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ եւ ճշմարտահաւատ. հրաման տայր այնուհետեւ արքայն Վրաց՝ ի կողմանց կողմանց եւ ի խառնադանց գաւառաց իշխանութեան իւրոյ ժողովել մանկունս եւ տալ ի ձեռն վարդապետին: Չոր առեալ՝ արկանէր ի բովս վարդապետութեանն եւ հոգեւոր սիրոյն եռանդմամբ զաղտ եւ զժանգ շարաւահոտ դիւացն եւ զսնտիագործ պաշտամանն ի բաց քերէր, այնչափ անջատեալ ի հայրենեաց իւրեանց եւ անյիշատակ ցուցանել, մինչեւ ասել, թէ՛ «Մոռացայ զժողովուրդ իմ եւ զտուն հաւր իմոյն»:

Եւ արդ զնոսա, որ յայնչափ ի մասնաւոր եւ ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամաւքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յարինէր: Յորոց եւ գտան արժանիք՝ ելեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ, որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ եւ բարեպաշտաւն, եպիսկոպոս կացեալ տանն արքունականի:

Իսկ իբրեւ ընդ ամենայն տեղիս Վրաց կարգեալ զգործ աստուածապաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի ևոցանէ՝ դառնայր յերկիրն Յայոց եւ պատահեալ Սահակայ կաթողիկոսին Յայոց, պատմէր նմա զողջութենէ եղելոցն, միանգամայն եւ փառաւոր առնելով զԱստուած, զմեծանունն Քրիստոս:

[ԺԶ]

Ապա դարձեալ ելաներ, շրջեր գտնելաւ կարգելովք եւ զգաւառաւքն աշակերտելովք աշխարհին Յայոց, զուարթացուցանել, նորոգել եւ հաստատել: Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս լի առնէր զսուրբ անտարան Տեան եւ ամենեցուն զգուշացուցեալ զկենաց ճանապարհն վարելոյ, խորհուրդ առնէր այնուհետեւ վասն կէս ազգին Յայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Յռոմոց:

Եւ փութացեալ զնայր հանդերձ աշակերտաւք բազմաւք անցանել ի կողմանս Յունաց: Եւ վասն առաւելագոյն բարեգործ համբաւուց՝ յառաջագոյն զնմանէ անդ ի հիւսիսական կողմանց հռչակելոց՝ առաւել միամտութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին եւ իշխանաց եւ ի գաւառականացն պատուեալ լինէր, մանաւանդ ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Անատողիս, ի մուտ ճանապարհին, որ զիրս առաջի եղեալ՝ գրով ցուցանէր կայսերն, որում անուն Թեոդոս կոչէին, որդի Արկադու կայսեր. ուստի եւ հրաման ելաներ՝ վայելուչ մեծարանաւք զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ:

Իսկ նորա զբազմութիւն աշակերտացն տարեալ ի քաղաքն Մելիտինացոց, յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին, եւ գլխաւոր աշակերտացն թողոյր զայն, որում Ղեւոնդէոսն կոչէին, այր հաւատարիմ եւ ճշմարտապաշտ: Եւ առեալ երանելոյն զպատուական եպիսկոպոսն Դերջանոյ, որոյ անուն կոչէր Գինթ, եւ զսակաւս յաշակերտաց անտի, եւ ելեալ յանդրուարն դիմոսական եւ բազում պատիւ գտեալ, հասանէին ի թագաւորակաց քաղաքն Կոստանդինական: Չորմէ իսկոյն պատմէին յարթունիսն, եւ մտեալ առաջի պատուական արթոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն եւ հայրապետին սրբոյ կաթողիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատտիկոս կոչէին, յորոց եւ գտեալ շնորհս: Հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանաւք կարգելովք յեկեղեցոյն եւ յարթունեաց եւ ի պատուական իշխանաց քաղաքին:

Եւ ապա յետ Պասեթին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյիցն զհանգամանս, եւ առեալ զանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերաւք կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ազգէն Յայոց ժողովելոյ, եւ վասն ժանտագործ ազգին բարբարիանոսաց, եւ եկեղեցեաց հաստատութեան, եւ մեծամեծ պարգեւաւք պատուելոյ: Վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին զարթունիսն, անընկալ թողոյր: Եւ երկիր պագեալ ծիրանափառ աւգոստականացն եւ սրբոյ կաթողիկոսին, եւ ընկալեալ որջոյն յեկեղեցոյն եւ յերեւելի իշխանաց քաղաքին, եւ ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս եւ ի կառս արթունատուրս, եւ մեծաւ շքով եւ բազում վայելչութեամբ ունէին զճանապարհս արթունականս: Եւ ամենայն քաղաքացն պատահելով, ի քաղաքին պայծառագոյն երեւէին:

Եւ մեծամեծ պարգեւս գտեալ, զային հասանէին ի ժամադիր կողմանս: Եւ անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Յայոց, հանդերձ սակերաւք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանաւք, փութայր վաղվաղակի զհրամանն կատարել: Եւ հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Յայոց իշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկտոյ ժողովել եւ նոցին ռոճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս, յորս եւ երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, եւ ժողովելոցն քաղցրացուցանէր:

Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր զդժպատեհ եւ զկամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ: Եւ իբրեւ ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր

զթշուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս: Իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս, ապա խանձեալս, մրեալս եւ գունակ գունակ խայտառակեալս, եւ յաշխարհէն կորզէին:

Իսկ երանելոյն զիւր վարդապետութեանն պայման արարեալ սակեալ եւ վճարեալ: Եւ բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ ստացեալ, ծովացուցանէր զվարդապետութեանն զխորութիւն, եւ լցեալ զեղոյր ամենայն բարութեամբք:

Յայնմ ժամանակի եկեալ դիպեր նմա այր մի երեց աղուան ազգաւ, Բենիամէն անուն. եւ նորա հարցեալ եւ քննեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս ըստ վերնապարգել կորովի սովորութեան իւրում եւ յաջողութեամբ Զրիստոսի շնորհացն կարգեալ եւ հաստատեալ կշռէր:

Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկոպոսաց, յիշխանաց աշխարհին եւ յամենայն եկեղեցեաց. առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն՝ զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն, որոց առաջնոյն Ենովք անուն էր, եւ երկրորդին Դանան, արք կրանաւորք եւ յառաջադէմք յաւետարանական սպասաւորութեանն. զորս յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ՝ անդէն գետեղէր: Եւ ինքն բազում աշակերտաւք գայր, անցանէր ի կողմանս Յայոց Մեծաց եւ հասեալ ի Նոր Զաղաքն՝ յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ եւ թագաւորին Յայոց, որում անուն Արտաշէս կոչէին, եւ ամենայն բանակին: Եւ պատմեալ նոցա զգործս կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց շնորհացն Աստուծոյ, դադարէր անդ աւուրս ինչ, միսիթարէր վասն հոգեւոր անձուկն սփռելոյ:

[ԺԷ]

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ զնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իջանէր յաշխարհն եւ հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատաւք հանդերձ. որոց առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Զրիստոսի: Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր: Եւ նոցա երկոցունց զուգակցելոց, եպիսկոպոսին եւ թագաւորին, յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ. տային եւս հրաման՝ ի գաւառաց եւ ի տեղեաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկանց յարուեստ դպրութեանն ածել եւ գումարել՝ ըստ արժանաւոր եւ պատեհ տեղեաց, դասս դասս դպրոցաց, եւ ռոճիկս կարգել ի դարմանս:

Իսկ իբրեւ հրամանն այն արդեամբք եւ գործովք յանկ ելանէր, ապա այնուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յական թաւթափել վայրենամիտ եւ դատարկասուն եւ անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարգարեագետք եւ առաքելածանաւթք եւ աւետարանաժառանգք լինէին, եւ ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իւիք անտեղեակք: Դարձեալ առաւել եւս երկիւղածն յԱստուծոյ արքայն Աղուանից՝ միամիտ փութով հրաման տայր սատանայակիր եւ դիւամուլ ազգին սաստիւ՝ թափել զերծանել յունայնավար հնացելոցն եւ հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Զրիստոսի:

Եւ յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ եւ լցեալ զպիտոյն իւրեանց եւ զկամացն յաւժարութիւն, ձեռնատու եւս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին, որում անուն Մուշեղ կոչէին, հրաժարէր ապա եւ ի թագաւորէն եւ յեպիսկոպոսացն եւ յամենայն եկեղեցւոյն Աղուանից: Եւ զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանէր, հանդերձ արամբ քահանայիւ

արքունական դրանս, որում անունն Յովնաթան կոչէին, որոյ բազում յաւժարութիւն ի վարդապետութենէն էր գտեալ:

Եւ յանձն առնելով զնոսա եւ զանձն՝ ամենապահ շնորհացն Աստուծոյ, խաղացեալ գայր ի կողմանցն Աղուանից, անցանել յաշխարհն Վրաց:

[ԺԸ]

Եւ հանդէպ հասեալ գայր Գարդմանական ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում [անուն] Խուրս կոչէին, եւ ասպնջական եղեալ նմա աստուածասեր երկիւղածութեամբ, առաջի դներ զանձն վարդապետին, հանդերձ իշխանութեամբն իւրով: Առաւելագոյն իսկ վայելեալ ի հիւթ եւ ի պարարտութիւն վարդապետութեանն, յուղարկէ գերանելին՝ ուր եւ երթալոցն էր: Իսկ Նորա անցեալ դիմեալ ի կողմանս:

Առ որով ժամանակաւ Արծիւղ անուն թագաւորեալ Վրաց, որոյ առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն եւ Նորա շրջեալ զամենայն աշակերտաւքն, պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն:

Յայնժամ իշխանին Տաշրացւոց, առն պատուականի եւ աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով. եւ Նորա ամենսփիւռ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ, քան զայլոցն գաւառաց անցուցեալ:

Եւ յանձն արարեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ՝ զոր ի վերոյ նշանակեցաք, ինքն դառնայր ի կողմանս Յայոց Մեծաց. եւ եկեալ ի սովորական տեղիսն, զընդելական ողջոյնս սրբոյն Սահակայ եւ ամենայն պատահելոցն տուեալ, պատմէր Նոցա վասն այնր եւս Նորագործ իրացն. որք իբրեւ լուան, առաւել գոհանային զպարգեւացն Աստուծոյ:

[ԺԹ]

Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զհլրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել եւ դիւրացուցանել: Ձեռն ի գործ արկաներ ի թարգմանել եւ ի գրել մեծն Իսահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն:

Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, եւ երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն, ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուցեն:

Իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն, եւ կատարեալ զիրամանսն եւ առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային ի կողմանս Յունաց, ուր եւ ուսեալք եւ տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց ի Յայաստան աշխարհէս, դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ եւ Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, եւ երկրորդն՝ Կորիւնս, եւ մատուցեալ յարէին յԵզնիկն, իբրեւ առ ընտանեգոյն սննդակից՝ ի Կոստանդինական քաղաքին, եւ անդ միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն զխնդիրն վճարէին: Որոց յետ այնորիկ հաստատուն աւրինակաւք աստուածատուր գրոցն եւ բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, եւ Նիկիական եւ Եփեսոսական

կանոնաւք, գային երեւելով աշխարհին Յայոց, եւ առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ:

Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս հաստատեր ճշմարիտ արինակաւք բերելովք: Եւ շատ եւս մեկնութիւն գրոց թարգմանէին:

Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս գրոց ծախէին հարքն՝ զտիւ եւ զգիշեր, եւ նովիմք ծաղկեալք եւ շահաւետեալք՝ արինակ բարեաց ուսումնասեր առընթերակայից լինէին. մանաւանդ զի ունէին պատուիրանս զգուշացուցիչս յաստուածակարգ պատգամաւորացն, յորոց առաջինն հրամայէ, թէ՛ «Յաւրէս Տեառն խորհեսցիս ի տուէ եւ ի գիշերիք. եւ երկրորդն հանգոյն նմին պատուիրէ, թէ՛ «Մի՛տ դիր ընթերցուածոց միտիթարութեան վարդապետութեան, մի՛ անփոյթ առնել զշնորհացդ որ ի քեզ են. յայդ խորհեա՛ եւ ի դոյն յամեսջիր. զայդ եթէ առնիցես, ե՛ւ զանձն ապրեցուցես, ե՛ւ զայնոսիկ, որ քեզն լսիցեն:

[Ի]

Ապա յետ այնորիկ դարձեալ՝ այնպիսի առաւել եւ բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարեականաց կարգել եւ յարինել, լի ամենայն ճաշակաւք արեւտարանական հաւատոցն ճշմարտութեան: Յորս բազում նմանութիւնս եւ արինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութեանական յուսոյն առ ի հանդերձեալսն, յերիւրեալ կազմեալ, զի հեշտընկալք եւ դիւրահասոյցք տիմարագունիցն եւ մարմնական իրաւք զբաղելոցն լինիցին, առ ի սթափել եւ զարթուցանել եւ հաստահիմն առ ի խոստացեալ արեւտիսն քաջալերել:

[ԻԱ]

Եւ այնպէս յամենայն կողմանս Յայոց, Վրաց եւ Աղուանից զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն եւ զձմեռն, զտիւ եւ զգիշեր՝ անվեհեր եւ առանց յապաղելոյ իւրով իսկ արեւտարանական եւ ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց եւ իշխանաց եւ ամենայն հեթանոսաց եւ անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին: Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ եւ հոգեղէն վառեաց, եւ բազում բանդականաց եւ կալանաւորաց եւ տագնապելոց ի բռնաւորաց թողութիւն արարեալ՝ կորզելով զնոսա ահաւոր զաւրութեամբն Քրիստոսի: Եւ բազում մուրհակս անիրաւութեան պատառեաց, եւ բազում սգաւորաց եւ կարճամտելոց՝ միտիթարական վարդապետութեամբն զակնկալութիւն յուսոյն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի նաւթճեաց. եւ զամենայն միանգամայն յաստուածապաշտութեան պայման անդր փոխեաց:

[ԻԲ]

Եւ դարձեալ բազում եւ անհամար գունդս վանականաց ի շէսս եւ յանշէսս, դաշտականս եւ լեռնականս, անձաւամուտս եւ արգելականս բնակեցուցեալ հաստատեր: Չորս ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբն արինակ ցուցաներ. առեալ զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանացն եւ երթեալ լեռնակեաց, սորամուտ ծակախիթ

եղեալ՝ գառաւրեական զկերակուրն խոտաբուտ ճաշակաւքն վճարէին: Եւ այնպէս վշտակեաց տկարութեան զանձինս տային, մանաւանդ որոց հայեցեալ ի միսիթարութիւն առաքելական բանիցն, թէ՛ «Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի, յայնժամ զաւրացեալ լինիմե, եւ թէ՛ «Լաւ եւս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեսցէ յիս զաւրութիւնն Քրիստոսիտ:

Անդ էր այնուհետեւ չարքենալ գինւով, այլ առաւելուլ հոգւով, եւ պատրաստել զսիրտս երգովք հոգեւորաւք, ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ: Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում գրոց: Անդ քաջալերութիւն յորդորական վարդապետութեան, առ ի յառաջադէմ ընտրութեանն՝ պսակահաս քրիստոսադիր կիտին: Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ աղաւթք աղերսալիք, եւ ինդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասերն Աստուած:

Եւ նովին հոգեկրան արուեստիւն հաներ աւուրս բազումս յանապատ տեղիս, մինչեւ ազդ լիներ յերիցանց՝ իրաց ինչ աւգտակարաց եկեղեցեաց կողմանցն այնոցիկ՝ հասանել յաւգնականութիւն շնորհաւքն Քրիստոսի: Եւ նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ գործակցաւ իջեալ ի թիկունս դիպացն պատահելոց, եւ վճարեալ զաւրութեամբն Աստուծոյ, եւ յորդորագոյնս եւ պարարտագոյնս եւ անփակ բերանով՝ զվտակս վարդապետութեանն ի սիրտս լսողացն ծաւալեցուցաներ:

Եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր վասն անձին եւ վասն աշխարհի. քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքիլութիւնս կանոն աշակերտելոցն դնել, մանաւանդ յուշ առնելով զտերունականն՝ զմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ. «Քանզի սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել: Որոյ բազում անգամ առեալ զաշակերտսն ուրոյն, եւ աննիազական անձամբն աւրինակ կարաւտելոցն լինէր, յորժամ ի Թաբաւրական լերինն՝ զաւետեաց երանութիւնն տայր, եւ յորժամ ի նմին լերին զկանոնական զաղաւթս առնէր, մինչդեռ աշակերտքն ի Տիբերական ծովուն նաւէին: Եւ դարձեալ յաւուրս բաղարջակեացն յաւրինական տանին՝ զգիշերոյն աղաւթքն եւ ցայգոյ, ի Ձիթաստանեաց լերինն առանձինն մատուցանէր: Ուստի եւ յայտնի իսկ է եւ առանց խուզելոյ, եթէ ոչ վասն անձին ամենատերն, այլ համաշխարհի յուսումն զայն գործեր. որ է աւրինակ ամենայն հնազանդելոց. վասն որոյ ասէր իսկ. «Արթուն կացեք, զի մի՛ ի փորձութիւն մտանիցեք:

Իսկ արդ եթէ թերեւագոյն արուեստից՝ յակասագոյն են ի գիտութենէ ազգք երկրածնացս, ո՛րչափ եւս այնմ արուեստի ոք համարեսցի եւ անգիտանալ՝ որ ընդ Աստուած գիաւսսն կատարէ: Որով երանելին Պաւղոս ամենեցուն տգիտանալ ասէ, վասն որոյ զամենակեցոյց Յոգին ի թիկունս հասանել՝ անմռունչ հեծութեամբ բարեխաւս գիտէ:

Իսկ արդ յորժամ լսիցեմք, եթէ՛ «սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել, ապաքէն առնէ եւ ուսուցանէ, եւ ոչ եթէ զի պարգեւեսցէ իմանալի է: Եւ բարեխաւսել նորա վասն սրբոց եւ բարեխաւսել Յոգոյն Սրբոյ՝ առ ի վարդապետելոյ մեզ, զի ընդ միմեանց բարեխաւսելն գիտելի է. քանզի միապատիւ է աստուածականն եւ ոչ բազմաբար:

Իսկ երանելի առաքելոցն ընկալեալ ի վարդապետութենէ ճշմարտութեանն, նախ կարաւտական անձանցն մատակարարէին, եւ ապա աշակերտացն բարձեալ տանէին. երբեմն առանձինն՝ եւ երբեմն ժողովրդովքն գումարելովք՝ զփառսն Քրիստոսի առաւելովք բարձրացուցանէին. քանզի առաւել աւգտակար իսկ է՝ յամենայն աշխարհակիր զբաւսանաց առանձինն սահմանել եւ միայն աստուածապաշտութեանն պարապել, զոր եւ մարգարէքն գործէին, որք ի լերինս եւ յանապատս եւ ի փապարս վիմաց՝ զաստուածեղէն կրանիցն զծառայութիւն հարկանէին:

Նոյնպես եւ ամենայն հարթն, որք յաշորդեցան յառաքելական կանոնաց, կրեալ անձամբք զլաւութիւնս՝ բերէին վերջնոցս արիւնակ. ուստի երանելիս այս բարձեալ էր զաւանդելոցն պատիւ, եւ ամենայն մատուցելոց առ նա՝ զնոյն պատուիրեալ գուշակեր: Եւ այնպէս յառաջ՝ ամենայն աստուածեղէն գանձուցն վայելչութեամբք լցեալք, պարարտացեալք, խաղացեալք գնային ի բազում ժամանակս՝ նովին ի նոյն կանխեալք, ի նմին հանապազորդեալք:

[ԻԳ]

Յայնմ ժամանակի բերեալ երեւեցան ի Յայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունայնախաւս ականդութիւնք ամն ուրումն հոռոմի, որում Թեոդորոս անուն: Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետացն եկեղեցեացն սրբոց նշանակեալ՝ ազդ ամենին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ եւ Մաշթոցի: Եւ նոցա ճշմարտասէր փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց սահմանացն մերժեցին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ:

[ԻԴ]

Յետ այնորիկ դեպ լինէր նովին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայն ժամանակաւք եւ վայելչացեալ աստուածաբեր պտղոցն, բարութեամբք, յառաջնումն ամի երկրորդ Յագկերտի, որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ գաւառի, ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս եւ զաւր ծննդեան երանելոյն յիշէին, յերկրորդ ժամու աւուրն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն, հանդերձ աստուածահաճոյ աղաւթիւք ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ, հայեցեալ ի բան մարգարէին, որ ասէր. «Ի ձեռս քո յանձն ամեն գիւղի իմե. եւ Ստեփաննոսի երանելոյ, որ ասէր. «Տէր Յիսուս, ընկա՛լ գիւղի իմե: Ըստ նմին արիւնակի եւ նորա ապսպրեալ զանձն եւ զմնացեալս ամենապահ շնորհացն Աստուծոյ:

Չոր եւ առեալ վաղվաղակի ամենայն հանդերձելովք՝ ձեռնասուն աստուածասէր պաշտանւեիցն իւրոց, որոց գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ եւ բարեպաշտան, հանդերձ աստուածասէր իշխանակնաւ միով, որ անուանեալ կոչէր Դուստր, որ էր կին Վարդանայ, զոր ի վերնոյն յիշեցաք, եւ բազում ամբոխից սրբոց ժողովոց: Բարձեալ զսուրբն սաղմոսիւք եւ արիւնութեամբ եւ հոգեւոր բարբառով, յետ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ եւ ընդ գիշեր ի Տարան հասուցանէին մինչ ի բուն իսկ գիւղն յվշտիշատ: Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկել սրբոյն հանդերձ ամենայն անուշահոտ ինկաւք եղեալ եւ կնքեալ քրիստոսական կնքովն՝ եւ զարիւնաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետեւ իւրաքանչիւրն դառնային: Որոց եւ նոյնպէս ամի ամի գումարելովք ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տաւնախմբեն:

[ԻԵ]

Իսկ երանելի զուգականին լուեալ, զՄաշթոցէ ասեմ, բազում անձկայրեաց տրտմութեամբ եւ արտաւերագութիւն ողբովք եւ ծանրաթախիժ սգովք պաշարեալ դներ. զի թէ առաքեալն սուրբ ոչ գտեալ առժամայն զընդելակիցն զՏիմոթէոս՝ անհանգիստ զհոգւոյն ասէ, ո՛րչափ եւս առաւել զմիանգամայն զհրաժարելոցն՝ սաստիկ կիրս մնացելոցն է համարեալ: Բայց թէպէտ եւ միայնաւորութեանն տրտմութիւն չթողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացսն եւ զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ շնորհաւքն Աստուծոյ

առանց պակասութեան տաներ, եւ առաւել փութայր գուն եդեալ՝ զամենեսեան յորդորելով
առ բարեացն քաջութիւն: Եւ զգայգ եւ զցերեկ պահաւք եւ աղաւթիւք եւ ուժգին
խնդրուածովք եւ բարձրագոյն բարբառովք՝ զաստուածադիր պատուիրանացն, հրամանս
յուշ առնելով՝ զգուշացուցանէր ամենայն մարդոյ, մինչեւ բազմագոյնս եւ գդժուարագոյն
վարուց կրթութիւնս. մանաւանդ զի եւ զմտաւ իսկ ածեր ըստ ծերունական հասակին զաւր
վախճանին, չտայր քուն աչաց եւ ոչ կիրի արտեւանաց՝ մինչեւ հասանել ի հանգիստն
Տեան:

[ԻԶ]

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրեւ զհոգեւոր եռանդն ածեր, եւ բազում թուղթս
խրատագիրս եւ զգուշացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքեր, անդէն ի նմին ամի, յետ
ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ, լինէր հանդերձ սրբով
վարդապետան բանակն Հայոց յԱյրարատեան ի Նոր Քաղաք, եւ նովին հոգեկրան
վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց
հիւանդութեանն, յերեքասաներորդում ամսեանն Մեհեկանի: Եւ յորժամ որոշեալ ի միջոյ
ձեռնասուն աշակերտացն եւ խառնեալ ի գունդն Քրիստոսի հասանէր, թեթեւացեալ եւ
սթափեալ ի ցաւոցն՝ կանգնեալ նստաւ ի ժողովոյն միջի, եւ համբարձեալ զձեռն
հանապազատարած յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր շնորհացն Աստուծոյ, վասն
նոցա աւգնականութիւն հայցէր:

Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն են այս. առաջնում Յովսէփ, զոր եւ ի
սկզբան գրեցաք. երկրորդին Թադիկ. արք զգաստք, զգուշագոյնք հրամանաց
վարդապետութեանն: Ի զինուորական կողմանէն առաջնումն Վահան անուն յազգէն
Ամատունեաց, որ Էր հազարապետ Հայոց Մեծաց, եւ երկրորդին Հմայեակ՝ ի Մամիկոնեան
տոհմէն, արք պատուականք, երկիւղածք, հրամանակատարք վարդապետական
հրամանաց: Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի
խաչանման լուսաւոր շողաւոր ձեւ երեւեր ի վերայ ապարանիցն, յորում երանելին
վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, եւ ոչ առ յընկերէ պատմեալ: Եւ սորա
սրբոցն զսեր եւ զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս եւ զհեռաւորս աւրհնութեամբ
պսակէր, եւ զհաճոյական աղաւթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեալ:

Չոր առեալ Վահանայ եւ Հմայեակի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհական
ամբոխիւ, սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ հոգեւոր ցնծութեամբք, կանթեղաւք վառելովք
եւ ջահիւք բորբոքելովք եւ ինկաւք բուրելովք եւ ամենայն լուսաճաճանչ գնդին, եւ այնու
խաչանշան լուսաւոր յառաջախաղաց նշանան, յԱւշականն ելանէին, եւ անդ ի
մարտիրոսարանն մատուցեալ, զաւրինաւոր յիշատակն կատարեալ, ապա նշանն
աներեւոյթ լինէր, եւ նոքա յիւրանքանչիւր դառնային տեղիսն:

Իսկ յետ երից ամաց անցելոց յաջողեցան Վահանայ Ամատունւոյ քրիստոսասեր փութով
խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմաւք քանդակելովք, եւ ի ներքսագոյն խորանին
զսրբոյն հանգիստն յաւրինեալ: Որոյ սպասս վայելուչս, գունագոյնս, պայծառատեսիլս,
ոսկւով եւ արծաթով եւ ակամբք պատուականաւք՝ ի յիշատակարան սեղանոյն
կենդանարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի պատրաստեալ, եւ ամենայն սրբովք ի
միասին գումարելովք զմարմին խաչակրան վկային Քրիստոսի, երանելոյն Մաշթոցի, ի
հանգիստ խորանին փոխէր: Եւ զնորին աշակերտ Թադիկ անուն, զայր զգաստ եւ
բարեպաշտան, հանդերձ եղբարքք, երանութեանն հասելոյ սպասաւոր սրբոյն ի փառս
Աստուծոյ կարգէին:

[ԻԷ]

Եւ գլխաւորս, վերակացուս, տեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց, որոց առաջինն Յովսէփ, գլխաւոր ժողովոյն, եւ երկրորդն այլ աշակերտ՝ Յովհան անուն, այր իսկ սուրբ, վարդապետասեր եւ ճշմարտապատում: Որում դէպ լինէր յետ վախճանի սրբոյն, բազում եւ ազգի ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց, մենամարտիկ երկպատական բռնութեանն, ի Տիգրոն քաղաքի վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասն որոյ եւ գիտստովանողական անուն ժառանգեաց, ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Յայոց:

Իսկ բարեացապարտին Վահանայ, որ յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր՝ աշխարհաճնունդ հայրենեացն սեպիական որդի գտեալ շնորհաւքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, մերձաւոր կենակից լինել վայելէր:

[ԻԸ]

Եւ զի ըստ աւրինակի գրելոցս առ ի մենջ հարքն ի կատարումն դարձան՝ ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ եւ մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն, եւ առնութեակաց հոգեւորական գործոցն, եւ լսող շնորհապատում վարդապետութեանն, եւ նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն: Ոչ սուտապատում ճարտարիսաւս եղեալ առ ի մերոց բանից զհաւրէն իմոյ կարգեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ, եւ ի նշանաւոր գիտակացն քաղելով զհամառաւտս կարգեցաք, որ ոչ միայն մեզ, այլ եւ որ զմատեանս ընթեռնուն՝ յայտնի է:

Քանզի չեաք իսկ հանդուրժաւոյք՝ զամենայն արարեալսն կտակաւ նշանակել զիրաբանչիրսն. այլ ի դիւրագոյնս եւ ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատսպարեցաք. որոց անցեալ զբազմախումն արգասեալք սրբոցն՝ առ ի մանրակրկիտ առնելոյ զկարեւորագոյնս պատմելոյ զհանգամանս: Ասացաք ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ, որք ամենապայծառ հաւատով եւ վարուք ծանուցեալք յարգեցան, այլ յաւրինակ քաջալերիչ՝ հոգեւոր ծննդոց իւրեանց, եւ որք նոքաւք աշակերտելոց իցեն յազգս ազգաց:

[ԻԹ]

Եւ արդ լինի համար ամաց հաւատոց երանելոյն ամբ քառասուն եւ հինգ, եւ ի դպրութենէն Յայոց մինչեւ ցվախճան սրբոյն՝ ամբ երեսուն եւ հինգ, որք համարին այսպէս. թագաւորեալ Կրմանայ Պարսից արքայի ամս վեց. եւ Յազկերտի ամս քսան եւ մի [եւ Վռամայ ութ եւ տասն], եւ յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ վախճանեցաւ երանելին:

Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն Կրմանայ արքայի մինչեւ ցառաջին ամն երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, եւ դպրութեանն Յայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն:

Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն: